ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20-21-21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

18 Մարտի 2021թ. ք. Երևան

Նախագահությամբ՝ Ռ. Սինոյան
անդամներ՝ Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Տ. Իսրաելյան
Բ. Ղալոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 11/03/21թ. «Վեստ Արմենիա»-«Արարատ» (ԳԽ016) խաղի մասին.
Երկրպագուները խաղին հետևում էին դարպասների հետևում ընկած տարածքից մարզադաշտում տրիբունայի բացակայության հետևանքով, որտեղ և չէին պահպանում սահմանված հեռավորություն և չէին կրում դիմակներ: Գնդակ մատակարարող երեխաները թերանում էին իրենց պարտականությունների կատարման մեջ, ինչի արդյունքում գնդակները մի քանի անգամ խաղի ժամանակ հայտնվեցին խաղադաշտում, ինչպես նաև պարբերաբար գնդակները հայտնվում էին դարպասային ցանցի անմիջապես հետևում: Մարզադաշտում խաղի ժամանակ չէին հաղորդվում գոլերը, փոփոխությունները և այլ անհրաժեշտ տվյալները:

2. 11/03/21թ. «Ալաշկերտ»-«ԲԿՄԱ» (ԳԽ013) խաղի մասին.
Մարզադաշտ մուտք գործելը եղել է առանց տոմսերի:

3. 12/03/21թ. «Վան»-«Արարատ-Արմենիա» (ԳԽ015) խաղի մասին.
Մարզադաշտում ձնամաքրման աշխատանքները կատարվել են ոչ պատշաճ, ինչի արդյունքում ձնակույտերով փակված էին գովազդային վահանակները՝ մասնավորապես Գավաթի խաղարկության հովանավոր Vbet ընկերության վահանակը, որոնք չէին երևում՝ և տրիբունայից, և հեռարձակման ժամանակ: Ձնակույտերի պատճառով խաղի տեսագրության մեջ դաշտի տեր թիմի պահեստային նստարաններից հետո խաղադաշտի եզրային գծի հատվածի մոտ 3-5 մետր չէր երևում:

4. 16/03/21թ. «Արարատ»-«Լոռի ՖԱ» (ԲԽ088) խաղի մասին.
Խաղը չկայացավ «Լոռի ՖԱ» թիմի՝ խաղասկզբին խաղադաշտը լքելու պատճառով:

5. 17/03/21թ. «Ալաշկերտ»-«Շիրակ» (ԲԽ090) խաղին՝ «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Հայկ Իշխանյանի (N 3336) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար).

6. 14/03/21թ. «Գանձասար-Կապան-05»-«Լոռի ՖԱ-06» (16Բ015) խաղի մասին.
Խաղը չի կայացել Լոռի-06 թիմի խաղին չներկայանալու պատճառով:

Հարց. 1

ՈՐՈՇՈՒՄ.

1. 11/03/21թ. «Վեստ Արմենիա»-«Արարատ» (ԳԽ016) խաղին՝ մարզադաշտում տրիբունայի բացակայության հետևանքով երկրպագուները խաղին հետևելու ժամանակ սահմանված հեռավորություն չպահպանելու և դիմակներ չկրելու, գնդակ մատակարարող երեխաները իրենց պարտականությունների կատարման մեջ թերանալու, մարզադաշտում խաղի ժամանակ գոլերը, փոփոխությունները և այլ անհրաժեշտ տվյալները չհաղորդելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 65-րդ և 66-րդ կետերի համաձայն՝ «ՖԱ Վեստ Արմենիա ՀԿ»-ին հայտարարել նկատողություն և տուգանել 10000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 2

ՈՐՈՇՈՒՄ.

2. 11/03/21թ. «Ալաշկերտ»-«ԲԿՄԱ» (ԳԽ013) խաղին՝ տոմսային համակարգի բացակայության համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 61-րդ կետի համաձայն՝ «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել 20000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 3

ՈՐՈՇՈՒՄ.

3. 12/03/21թ. «Վան»-«Արարատ-Արմենիա» (ԳԽ015) խաղին՝ մարզադաշտում ձնամաքրման աշխատանքները պատշաճ չկատարելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 66-րդ կետի համաձայն՝ ՖԱ «Վան» ՀԿ-ին հայտարարել նկատողություն և տուգանել 5000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 4

ՈՐՈՇՈՒՄ.

4. 16/03/21թ. «Արարատ»-«Լոռի ՖԱ» (ԲԽ088) խաղին՝ «Լոռի ՖԱ» թիմի՝ խաղասկզբին խաղադաշտը ինքնակամ լքելու, որի հետևանքով խաղը չի կայացել. ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ «Լոռի ՖԱ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, գլխավոր մարզիչ Ալբերտ Սոլոմոնովին (N 36999) որակազրկել մինչև 15/05/2021թ. ներառյալ, Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ-ին տուգանել 3000000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 5

ՈՐՈՇՈՒՄ.

5. 17/03/21թ. «Ալաշկերտ»-«Շիրակ» (ԲԽ090) խաղին՝ «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Հայկ Իշխանյանի (N 3336) հեռացման (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի

13-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Հայկ Իշխանյանին որակազրկել 1 խաղով, «Շիրակ» ՖԱ-ին տուգանել 30000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 6

ՈՐՈՇՈՒՄ.

6. 14/03/21թ. «Գանձասար-Կապան-05»-«Լոռի ՖԱ-06» (16B015) խաղին՝ «Լոռի ՖԱ-06» թիմի խաղին չներկայանալու պատճառով խաղը չկայանալու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 36-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Լոռի ՖԱ-06» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ-ին տուգանել 100000 ՀՀ դրամի չափով:

ՓՈԽՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

1. ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

   Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: